

## Բանկի շահութաբաժնային քաղաքականությունը

Օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր մյուս վճարումները կատարելուց հետո ձևավորվում է Բանկի տրամադրության տակ մնացող շահույթը, որի բաշխումը իրականացնում է բաժնետերերի Ընդհանուր ժողովը Բանկի Տնօրենների Խորհրդի առաջարկությամբ: Շահութաբաժինը վճարվում է «մեկ բաժնետոմս - մեկ ձայն – մեկ միավոր շահութաբաժին» սկզբունքով, անկախ բաժնետոմսի անվանական արժեքից: Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու իր մասնակիցների եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին, եթե այլ բան նախատեսված չէ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով:

Միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է բաժնետերերի Ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50%: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ: Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունելու շահութաբաժիններ չվճարելու, իսկ բանկի արտոնյալ բաժնետոմսի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

Բանկի տեղաբաշխված արտոնյալ, փոփոխական շահութաբաժնով բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժնի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$D=N*5%+[(P-N*5%*n) / n] * 5\%$$

որտեղ՝

D – թողարկված և տեղաբաշխված մեկ արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժնի չափն է,

N - թողարկված և տեղաբաշխված մեկ արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքն է,

P - Բանկի յուրաքանչյուր ֆինանսական տարվա արդյունքում ձևավորված գուտ (հարկերը և պարտադիր վճարները պահելուց հետո) շահույթի չափն է,

n - թողարկված և տեղաբաշխված բոլոր դասերի արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր քանակն է:

Ընդ որում՝ եթե գուտ շահույթի (P) մեծությունը հավասար է կամ փոքր է գրոյից, ապա տվյալ ֆինանսական տարվա արդյունքներով շահութաբաժին չի վճարվում:

Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ ուշ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո: Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա/ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

բ/ տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են բանկի բաժնետերերի ռեեստրում՝ բաժնետերերի Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը: